

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4

ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան

26 սեպտեմբերի 2017թ.

Ժամը 16³⁰

Մասնակցում էին՝

- Ա. Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար (խորհրդի նախագահ)
- Վ. Գևորգյան ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
- Տ. Խաչատրյան ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
- Դ. Անանյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Ա. Վարդևանյան ՀՀ վարչապետի ներկայացուցիչ, ՀՀ վարչապետի ավագ օգնական
- Ա. Խաչատրյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետի տեղակալ
- Ա. Հովհաննիսյան Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)
- Ս. Ադամյան «Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)

Բացակա էին՝

- Ա. Ամիրխանյան Հայաստանի ամերիկյան համալսարան, «Յակոբեան բնապահպանական կենտրոնի» տնօրեն (համաձայնությամբ)
- Պ. Խաչատրյան Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (համաձայնությամբ)

Հրավիրված էին՝

- Ե.Տերտերյան ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության
և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար
- Ա.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության
և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2018 թվականի բյուջետային հայտը հաստատելու հարցի քննարկում:

Ձեկուցող՝ Ե.Տերտերյան

2. ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի «Բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգն ընդունելու մասին» որոշման ընդունման հարցի քննարկում:

Ձեկուցող՝ Ա.Հակոբյան

Խորհուրդը հաստատեց օրակարգը:

Քննարկելով ներկայացված հարցերը Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2018 թվականի բյուջետային հայտը:

7 կողմ, 1 դեմ ձայներով

2. Ընդունել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի «Բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգն ընդունելու մասին» որոշումը:

Միաձայն

ՀՀ բնապահպանության նախարար,

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի նախագահ

Ա. Մինասյան

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի տեղակալ

Վ. Գևորգյան

ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի տեղակալ

Տ. Խաչատրյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Դ. Անանյան

ՀՀ վարչապետի ներկայացուցիչ,
ՀՀ վարչապետի ավագ օգնական

Ա. Վարդանյան

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավական ակտերի
փորձաքննության գործակալության
պետի տեղակալ

Ա. Խաչատրյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարանի ընդերքաբանության և շրջակա
միջավայրի պահպանության ամբիոնի վարիչ,
տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր (համաձայնությամբ)

Ա. Հովհաննիսյան

«Բնապահպանական հասարակական միություն»
հասարակական կազմակերպություն
(համաձայնությամբ)

Ս. Աղամյան

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և ընդերքի տեսչական
մարմնի իրավական աջակցության
և փաստաթղթաշրջանառության բաժնի պետ
(խորհրդի քարտուղար)

Տ. Մելիքսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբերի 2017 թվականի N 03-Ա

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 711-Ն որոշման 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը **որոշում է՝**

1. Ընդունել բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԳ

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ

I. ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քննապահականության նախարարության քննապահականության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից ստացված բողոքների ընդունման, հետագա ընթացքի և դրանց հետևելու հետ կապված հարաբերությունները: Սույն կարգը չի տարածվում թե՛ գծով ստացված բողոքների վրա:
2. Տեսչական մարմինն ընդունում և քննության է առնում շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում գործող անձանց (այսուհետ՝ սուբյեկտ) գործունեության հետ կապված բողոքները:
3. Բողոքները հասցեագրվում են տեսչական մարմնին:
4. Բողոքները կարող են ներկայացվել առձեռն, էլեկտրոնային եղանակով, փոստով, ինչպես նաև կարող են փոխանցվել այլ պետական մարմիններից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:
5. Բողոքները պետք է պարունակեն դրանք ներկայացնող անձի վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝
 - 1) անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.
 - 2) հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).
 - 3) տեսչական մարմնի անվանումը.
 - 4) բողոքով ներկայացվող պահանջը (բողոքի առարկան).
 - 5) կից փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են).
 - 6) բողոքը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը.
 - 7) բողոքողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:
6. Եթե բողոքը ներկայացվել է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:
7. Անանուն, կեղծ և (կամ) սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը չպարունակող բողոքներին ընթացք չի տրվում և հնարավորության դեպքում դիմումատուին տեղյակ է պահվում բողոքին ընթացք չտալու պատճառների մասին:
8. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա տեսչական մարմինը դիմումն ստանալու պահից 30-օրյա ժամկետում պատասխանում է բողոք ներկայացնող անձին և որոշում է ընդունում ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկատվությունը տվյալ սուբյեկտի դիսկալնության հաշվարկում ներառելու վերաբերյալ:

9. Սուբյեկտների վերաբերյալ բողոքների ներկայացումը հիմք չէ ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետով սահմանված դեպքի:

10. Բողոքների քննության արդյունքները վերլուծվում, դիտարկվում և օգտագործվում են ռիսկերի կառավարման համար:

11. Եթե սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքը պարունակում է տվյալ սուբյեկտի կողմից օրենսդրության խախտման մասին վկայող տեղեկատվություն, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ կետին, ապա տեսչական մարմինը բողոքին ընթացք է տալիս «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները վերլուծվում են տեսչական մարմնի կողմից և ամփոփվում համապատասխան ոլորտի ռիսկերը՝ սուբյեկտների անհատական ռիսկերը գնահատելու, ինչպես նաև սուբյեկտների ռիսկայնության աստիճանը որոշելու գործընթացում:

13. Տեսչական մարմինը վարում է ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրություն և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո քսանօրյա ժամկետում հաշվետվություն է ներկայացնում իր կառավարման խորհրդին:

II. ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՑ՝ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔՆԵՐ

14. Սուբյեկտներից տեսչական մարմնի ծառայողի (ստուգում իրականացնող անձի) գործողությունների կամ անգործության, ստուգում անցկացնելու հետ կապված բողոքներ (այդ թվում՝ ստուգման ակտի բողոքարկում) ներկայացվելու դեպքում տեսչական մարմինը սուբյեկտին ուղղորդում է լրացնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 311-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքը:

15. Սահմանված կարգով լրացված դիմում-բողոքը տեսչական մարմինը մեկօրյա ժամկետում ներկայացնում է տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի քննությանը:

16. Դիմում-բողոքն ընդունող տեսչական մարմինը տեղեկացնում է այն ներկայացնող անձին բողոքը տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին փոխանցելու և դրան հետագա ընթացք տալու կարգի վերաբերյալ:

17. Տեսչական մարմինն իրականացնում է միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից սուբյեկտի բողոքը բավարարելու վերաբերյալ ընդունված որոշման վերլուծություն և հաշվի է առնում այն տեսչական մարմնի ծառայողի գործունեության կատարողականի գնահատման գործընթացում, ինչպես նաև տեսչական մարմնի որակի բարելավման միջոցառումներում:

18. Տեսչական մարմինը վարում է ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրություն և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո քսանօրյա ժամկետում հաշվետվություն է ներկայացնում իր կառավարման խորհրդին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբերի 2017 թվականի N 04-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշման N1 հավելվածի 34-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2018 թվականի բյուջետային հայտը՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17 և 18 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ